Ա փուլի Դասախոսություն 03:

Դասախոսություն 03

ԱՍՏՐԱԼ ԵԼՔԸ

Ինչո՞ւ է այն կոչվում Աստրալ Ելք:

- **Ելք**՝ որովհետև դա ներքին կրկնակի, կամ Հոգու, դուրսբերումն է՝ ֆիզիկականին ճիշտ նման մարմնի, սակայն մոլեկուլային բնույթի:
- Եվ **Աստրալ**՝ որովհետև նրանով մենք կարող ենք ճամփորդել դեպի բոլոր լուսատուները:

Այս գործողությունը կատարվում է անգիտակցաբար ամեն անգամ, երբ քնում ենք. մենք մտնում ենք մոլեկուլային աշխարհ, կամ երազների ոլորտ: Միակ տարբերությունը գիտակցաբար դուրս գալն է՝ քնած լինելու փոխարեն: Այսինքն՝ հինգերորդ չափման մեջ մտնում են գիտակցաբար և կամովին:

Ինչպե՞ս է կատարվում պրակտիկան:

Այն անելու շատ ձևեր կան, դրա համար կթվարկենք միայն մի քանիսը.

1 Կենտրոնացման միջոցով:

2 Երևակայությամբ:

3 Քնի Արթնություն:

4 Ակնթարթից ակնթարթ մեռնելով:

5 Մանտրայացման միջոցով:

Ինչևէ, իրապես կարևորն այն է, որ ուզենանք դա անել, և ապա համարձակվենք անել: Ուզել նշանակում է կարողանալ:

Մանտրայացման միջոցով պրակտիկայի համար խորհուրդ ենք տալիս հետևյալ քայլերը.

1. Կատարել Բելիլինի պաշտպանությունը և Կախարդական Շրջանը:
2. Աղերսել Աջակցություն Հորից և մեր սեփական Աստվածային Մորից և դնել Նպատակ:
3. Թուլացնել ֆիզիկական մարմինը և հոգեկանը:
4. Մանտրայել հետևյալ Մանտրաններից մեկը.

- ՖՖԱԱԱԱԱ ՌԱԱԱԱԱ ՕՕՕՕՕՆՆՆՆՆ:
- ԼԱԱԱԱԱԱ ՌՌՌԱԱԱԱԱԱ ՍՍՍՍՍՍՍ:
- ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕ:
- ՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՕՄՄՄՄՄՄՄՄ:
- ՌՌՌՌՌՌՌՌՌՌՌՌՌՌՌՌՌՌՌՌՌՌՌՌՌՌՌՌՌՌՌ:
- ՍՍՍՍՍՍՍ

Ելքի նշանները.

- Կարելի է զգալ, որ մարմինը փքվում է: Կարելի է զգալ, որ մենք լողում ենք:
- Կարելի է զգալ, որ մարմինը մեղմորեն օրորվում է:
- Կարելի է զգալ, որ ոտքերը կամ ձեռքերը բարձրանում և լողում են: Կարելի է զգալ մի փոքր հոսանքահարում:
- Կարելի է զգալ, որ մենք պտտվում ենք մեծ արագությամբ: Կարելի է լսել աղմուկ ականջների կողքին:
- Կարելի է գիտակցաբար հայտնվել երազի ներսում:

ԳԱՂՏՆԻՔՆ ԱՅՆ Է, ՈՐ ՊՐԱԿՏԻԿԱ ԱՆԵՆՔ ՄԵԾ ՀԱՄԲԵՐՈՒԹՅԱՄԲ, ՄԻՆՉԵՎ ՀԱՍՆԵՆՔ ԴՐԱՆ: ՀԻՇԵՔ, ՈՐ ՈՒՋԵԼ ՆՇԱՆԱԿՈՒՄ Է ԿԱՐՈՂԱՆԱԼ:

Դասախոսություն 03-ի ավարտ